

**ԱԳՐՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր – ագրոբիզնես, ապահովագրություն, ապահովագրության շահառուներ, ապահովագրության սոցիալ-տնտեսական արդյունավետություն

Ագրոապահովագրության արդյունավետության համակարգային գնահատման հիմնախնդրի լուծումները արդիական են համարվում թե՛ տեսական, և թե՛ գործնական շրջանակներում: Եթե նախկինում ապահովագրությունը համարվում էր արդյունավետ, սոսկ միայն այն պատճառով, երբ ապահովագրական պայմանագրի կողմեր հանդիսացող ֆերմերային տնտեսություններն և ապահովագրական կազմակերպությունները տնտեսական օգուտներ էին քաղում գործարքից (համապատասխանաբար **a** և **b**), ապա ներկայումս ապահովագրման վերջնարդյունքները առավել ընդգրկուն գնահատումների են սպասում, առնչվելով ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ասպեկտներին:¹ Այս պարագայում արդեն ընդլայնվում է ապահովագրական գործարքներին առնչվող շահառուների շրջանակը՝ ապահովագրողից և ապահովադիրից բացի, ընդգրկելով նաև պետությանը, բանկերին, բիզնես գործընկերներին և այլն:²

Ընդ որում, ագրոբիզնեսի ապահովագրությանը առնչվող շահառուները տարբեր նկատառումներով են հետաքրված ապահովագրական գործարքների վերջնարդյունքներով: Եթե ֆերմերը ապահովագրելով իր գործունեությունը, փորձում է փոխհատուցել բնակլիմայական պայմաններով, բիոլոգիական հիվանդություններով, գյուղմթերքների շուկայական գների կտրուկ անկումներով պայմանավորված վնասների ձևավորումը, ապա ապահովագրողը՝ որպես ֆինանսական հաստատություն, իր գործունեությունը թիրախավորում է ապահովագրական գործունեությունից առավելագույն շահույթի ստացմանը:

Պետությունը ագրոբիզնեսի ապահովագրությանը առավելեապես դիտարկում է ոչ թե բիզնես, այլ սոցիալական ու պարենային անվտանգ

¹ Прокопьева Е. Л., Оценка чфффективности страхового сектора: методы и подходы, //Финансы и кредит, #12, 2016, стр 50-50

² Орланюк-Малицкая Л.А. Методологические аспекты исследования страхового рынка России // Финансы. 2004. № 11. С. 54–59.

գույթյան լուծումների տեսանկյունից:¹ Գյուղմթերքների արտադրության վնասներից ապահովագրված ֆերմերը շարունակում է իր գործունեությունը և չի լքում գյուղը, և դրանով իսկ մեղմվում են միգրացիոն ռիսկերը (c): Եվ բացի այդ, բերքի կորստի ապահովագրման պարագայում ագրոբիզնեսը կայուն զարգացման տեսլականով է գործում և օժանդակում է երկրի պարենային անվտանգության ամրապնդմանը:

Բանկային համակարգը նույնպես իր շահախնդիր է դառնում ագրոապահովագրության նկատմամբ, քանի որ գյուղացիական վարկերին վերադարձելիության խոշոր ռիսկերը անմիջականորեն փոխկապակցվում են անբերանպաստ բնակլիմայական պայմաններով պայմանավորված վարկառու ֆերմերների բերքի կորստի, կամ համաճարակների պատճառով՝ ընտանի կենդանիների անկումների հետ: Հետևաբար, ֆերմերների վարկունակությունը գնահատելիս, առևտրային բանկերը անպայման հաշվի են առնում գյուղատնտեսական գործունեության ապահովագրության հանգամանքը և դրանցից ակնկալվող սպասելիքները (d):²

Ագրոբիզնեսի համակարգում ընդգրկված վերամշակող կազմակերպությունները, գործընկեր համարվելով ֆերմերային տնտեսությունների հետ, նույնպես շահախնդիր են վերջիններիս գործունեության վերջնարդյունքերի ձևավորման ապահովագրությամբ, և դրանից նույնպես սպասելիքներ ունեն (e): Գյուղմթերքների ապահովագրման պարագայում ֆերմերները գործում են վնասների ձևավորման և սննակացման բարձր ռիսկային գոտում, որով խախտվում է սննդարդյունաբերության մատակարարման շղթան, առաջանում է գործընկերային կապերի խզում, որն էլ իր հերթին բացասական ազդեցություն է թողնում սննդի վերամշակման կազմակերպությունների կայուն տնտեսական գործունեության վրա:³

Ապահովագրական գործընթացը իր դրական դրսևորումները բացի, ուղեկցվում է նաև բացասական գործոններով, ինչպիսիք են ֆերմերների եկամուտներից ապահովագրական վճարների ձևավորումը: Գյուղատնտեսական գործունեությունը համեմատաբար տնտեսավարման մյուս ճյուղերի, բացի վնասների ձևավորման բարձր ռիսկայնությունից, հանդես է գալիս շահութաբերության համեմատաբար ցածր մակարդակով: Եվ այս պարագայում, ապահովագրավճարների բեռի ձևավորումը լրացուցիչ ֆի-

¹ **Большунова Т.В.** Критерии и показатели оценки социальной эффективности страхования // Вестник Тамбовского университета. Серия: гуманитарные науки. 2008. Вып. 10. стр. 195–197.

² **Ղալթյան Ս.**, Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը որպես վարկավորման բարձրացման արդյունավետության գործոն, //Այլընտրանք գիտական հանդես, #2, 2018, էջ 232-245:

³ **Мамедов А.А.** Современное состояние финансово-правового регулирования страховой деятельности // Юрист. 2008. № 2. С. 18–21.

նանսական բեռ է հանդիսանում ֆերմերների համար:¹ Ուստի, տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես ունեն իրենց սպասելիքները ապահովագրման համակարգից (f) և իրենց հերթին ուղիներ են փնտրում հանրային ֆինանսների հաշվին թեթևացնելու ֆերմերների ապահովագրավճարների բեռը, որպեսզի վերջիններիս համար հնարավորինս գրավիչ դառնա գործող ապահովագրական համակարգը:

Այսպիսով, ապահովագրական պայմանագրային հարաբերությունների շուրջ հավաքվում են տարբեր շահառուներ, որոնք ունեն հավաքական սպասելիքներ $(a+b+c+d+f)$ և փորձում են իրենց գորունետությամբ աջակցել ապահովագրական գործընթացի արդյունավետությանը: Այս առումով հարց է առաջանում, թե ինչ հայեցկարգային մոտեցում է պահանջում ագրոապահովագրության արդյունավետության գնահատումը:

Մասնագիտական գրականությունում ապահովագրության արդյունավետության չափման տարբեր մոտեցումներ են առաջարկվում, ինչպես մակրո, այնպես էլ միկրոտնտեսական մակարդակներում (ՀՆԱ-ում ապահովագրական վճարների տեսակարար կշիռը, պատահարների փոխհատուցման տեսակարար կշիռը ապահովագրավճարներում, վնասների փոխհատուցման աստիճանը և այլն):² Սակայն, մեր կարծիքով, ապահովագրության արդյունավետության գնահատումը պետք է իրականացնել ոչ թե առանձին ուղղություններով, այլ համակարգային մոտեցմամբ, հաշվի առնելով ապահովագրությունից շահառուների պահանջունքների բավարարման արդյունքները:

Նման փորձ արդեն իսկ իրականացվել է ՀՀ ագրարային ոլորտում, սակայն այս պարագայում քննարկվել են միայն խոշոր եղջերավոր կենդանիների (ԽԵԿ) ապահովագրության շահառուների կարծիքները, առանց դրանք համակարգելու և համախմբելու գործընթացի արդյունավետությունը բնութագրող ինտեգրալային ցուցանիշում: 2016թ. ընթացքում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO), ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ, «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» (ENPARD) ծրագրի շրջանակներում նախաձեռնեց էր խոշոր եղջերավոր կենդանիների (ԽԵԿ) ապահովագրության պիլոտային ծրագիր: Ծրագրի իրականացման համար պարտադիր բաղադրիչներից էր գյուղատնտեսության ապահովագրությանը վերաբերող առնվազն 30 պիլոտա-

¹ Անտոնյան Բ., Գոյչանյան Շ., ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման հնարավորությունները, //ԵՊՀ, ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 4-րդ գիտաժողով, Եր., 2016, էջ 17-22:

² Шарапова С.А. Оценка эффективности управления сбытовыми каналами страховой компании на рынке страхования, // Вестник Московского городского педагогического университета. Серия: Экономика. 2014. № 1. С. 84–94.

յին ծրագրի առկայությունը: Ընդ որում՝ պիլոտային ծրագրի շրջանակներում ապահովագրական ծառայությունների դիմաց ապահովագրավճարները վճարման ենթակա էին FAO-ի կողմից:

ՀՀ-ում անասնաբուծության ոլորտում առավել հաճախ հանդիպող ռիսկերն են հիվանդությունները, եղանակային անբարենպաստ պայմանները, ստացված գյուղմթերքի իրացման գնի տատանումները, կենդանիների մթերատվության տատանումները և մարդկային գործոնը (ֆերմերների մասնագիտական ունակությունների բացակայություն, տեղեկատվության պակաս):¹ ԽԵԿ-ի ապահովագրության պիլոտային ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվեց, որ կհիմնավորվի ապահովագրության արդյունավետությունը և հետագայում այն կիրականացվի համապետական մասշտաբներով:

2016թ. դեկտեմբեր ամսին ENPARD ծրագրի կողմից հայտարարվեց մրցույթ՝ ՀՀ մարզերից որևէ մեկի մեկ կամ մի քանի համայնքներում իրականացնել գյուղացիական տնտեսություններին պատկանող ԽԵԿ-ի ապահովագրություն: Մրցույթի հրավերն ուղարկվեց ՀՀ-ում գործող ապահովագրական բոլոր 6 ընկերություններին: Մրցույթին մասնակցեցին 3 ապահովագրական ընկերություն: Արդյունքներն ամփոփվեցին 2017թ. փետրվարին, և հաղթող ճանաչվեց Նաիրի Ինշուրանս Ապահովագրական ՍՊԸ-ն:

Պիլոտային ծրագիրն իրականացվեց ՀՀ Արարատի մարզի Շահումյան և Տափերական համայնքներում: 2017թ. մարտ ամսին ծրագրի շրջանակներում 1 տարի ժամկետով ԽԵԿ-ի ապահովագրության պայմանագրեր կնքվեցին 32 ֆերմերների հետ՝ նրանցից 13-ը կանայք են: Մինչ պայմանագրեր ստորագրելը՝ հանդիպումներ տեղի ունեցան ֆերմերների և պիլոտային ծրագրում ներգրավված շահառուների միջև, որի ընթացքում Նաիրի Ինշուրանսի կողմից ներկայացվեցին ԽԵԿ-ի ապահովագրության պայմանները և պարզաբանվեցին ֆերմերներին և անասնաբույժներին հետաքրքրող հարցերը: Պիլոտային ծրագրի մեկնարկը տրվեց 2017թ. մարտի 7-ին և տևեց է մինչև 2018թ. մարտի 6-ը ներառյալ: Ծրագրի շրջանակներում ապահովագրվել են 224 ԽԵԿ: Գրանցվեց է 4 պատահար և բոլոր դեպքերով էլ ֆերմերներին տրամադրվեցին ապահովագրական փոխհատուցումներ՝ ապահովագրության պայմանների համաձայն:

Ծրագիրը թույլ տվեց նվազեցնել ֆինանսական ռիսկերը, ինչպես նաև բայց և այնպես արձահագրեց բացասական կողմեր, մասնավորապես այն համապետական բնույթ չկրեց կրում, ցածր էր ֆերմերների իրազեկվածության մակարդակը և բացակայում է վստահությունը ապահովագ-

¹ Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրական համակարգի ներդրման ուղիները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2017, էջ 22:

րության նկատմամբ: Ուստի ՀՀ գյուղատնտեսական նախարարության կողմից առաջարկվեց ընդլայնել ապահովագրվող կենդանիների գլխաքանակը:


FAO-ի հետ անցկացրած հարցման շրջանակներում վերջինիս կողմից բարձրացվեց մի կարևոր խնդիր՝ կապված կենդանիների համարակալման հետ: Գյուղերի մեծ մասը չի կատարում կենդանիների համարակալում և չի անցկացնում դրա պատշաճ ու հետևողական վարում, մինչդեռ համարակալման գործընթացը ապահովագրության մեկնարկի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Ուստի, FAO-ի կողմից առաջարկվեց կենդանիների հաշվառման գործընթացը կազմակերպել պիտակավորման եղանակով, հետագայում մշակել ԽԵԿ-ի շուկայական արժեքների գնահատման մեթոդոլոգիա՝ հաշվի առնելով սեռատարիքային կազմը և կենդանու պահման նշանակությունը՝ կաթնատու, մսատու և այլն: Հաշվի առնելով ԽԵԿ-ի պահման տարածքի բնակլիմայական պայմանները՝ բացի նախատեսված ստանդարտ պատվաստումներից՝ առաջարկվեց ըստ անհրաժեշտության իրականացնել նաև լրացուցիչ պատվաստումներ: Մասնավորապես, պիլոտային ծրագիրն ընդգրկած համայնքերում վերջին 2 տարիներին այլևս չեն իրականացվել մալարիայի դեմ պատվաստում, չնայած, որ տարածքում առկա են ճահիճներ և մոծակների միջոցով հնարավոր է տարածվի մալարիա հիվանդությունը: Ծրագրի շրջանակներում կենդանիներից մեկի անկման պատճառը հենց մալարիան էր:

Ինչ վերաբերում է իրականացված պիլոտային ծրագրի նկատմամբ ապահովագրական ընկերության դիրքորոշմանը, ապա Նաիրի Ինշուրանսի հետ անցկացված հարցման արդյունքում պարզվեց, որ ծրագրի իրականացման գլխավոր շարժառիթը է գյուղատնտեսական ապահովագրության զարգացումը և գյուղատնտեսական ապահովագրության համատարած ներդրումն էր: Հետագայում ԽԵԿ-ի ապահովագրության շարունակական բնույթ կրելու դեպքում Նաիրի Ինշուրանսը, ելնելով ապահովագրության միջազգային փորձից, մտադրվեց սահմանել 5% ապահովագրական վճարի դրույքաչափ, որոշ բացառություններով՝ կապված համատարած ապահովագրության դեպքի հետ:

Պիլոտային ծրագրի արդյունքների ամփոփման նպատակով հարցումներ անցկացվեցին Արարատի մարզի Շահումյան համայնքի ապահովագրական հատուցում ստացած և չստացած տասը ֆերմերների հետ: Հարցվողների 30%-ը իզական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 70%-ը՝ արական: Հատուցում ստացածների մասնաբաժինը ընդհանուրում 40% է, չստացածներինը՝ 60%: Վերջիններիս միջին տարիքը 50 տարեկանն է, կրթությունը՝ միջնակարգ, ընտանիքի անդամների քանակը միջինում 5-ն է, այդ թվում՝ տնտեսապես կախվածների քանակը միջինում 3:

Ապահովագրված կովերը ծրագրի շրջանակներում հարցված ֆերմերներին պատկանող կովերի ընդհանուր քանակի 97%-ն էին, իսկ ապահովագրված ցուլերը՝ ցուլերի ընդհանուր քանակի 27%-ը: Ապահովագրման տիրույթում 1-5 տարիքային միջակայքում կային 56 կովեր, որոնցից ապահովագրվել են 53-ը, իսկ 5-9 տարիքային միջակայքում կային 51 կովեր, որոնցից բոլորն էլ ապահովագրվել են: Ցուլերի տարիքային միջակայքը 0,5-3 տարեկանն է: Ապահովագրության ընթացքում տեղի է ունեցել 4 պատահար, որոնցից 2-ը՝ մալարիա և պիրոպլազմոս հիվանդությունների հետևանքով, իսկ մյուս երկուսը՝ վրատերթի և կենդանու օրգանիզմում հայտնաբերված 10-15 սմ երկարությամբ մետաղական լարի արդյունքում:


Գծապատկեր 1-ում ամփոփ ներկայացված են ապահովագրական պատահարների բնութագրիչները՝ ապահովագրական հատուցման գումարի չափ (ՀՀ դրամ), օգտակար մնացորդի արժեք (ՀՀ դրամ), շուկայական արժեք (ՀՀ դրամ), ԽԵԿ-ի քաշ (կգ):



Գծապատկեր 1: Ապահովագրական պատահարների բնութագրիչների ամփոփ ներկայացում

Ըստ այդ տվյալների սկնհայտ է, որ առաջին պատահարի դեպքում օգտակար մնացորդը 180 000 դրամ է, օգտակար քաշը՝ 100 կգ, շուկայական արժեքը՝ 150 000 դրամ, իսկ ապահովագրական հատուցման չափը 0 է, քանի որ օգտակար մնացորդի արժեքը գերազանցել է շուկայական ար-

ժեքը: Երկրորդ պատահարի դեպքում ապահովագրական հատուցման չափը 55 000 դրամ է, օգտակար մնացորդը՝ 65 000 դրամ, օգտակար քաշը՝ 90 կգ, շուկայական արժեքը՝ 170 000 դրամ: Երրորդ պատահարի դեպքում ապահովագրական հատուցման չափը 180 000 դրամ է, օգտակար մնացորդը՝ 65 000 դրամ, օգտակար քաշը՝ 110 կգ, շուկայական արժեքը՝ 300 000 դրամ: Չորրորդ պատահարի դեպքում ապահովագրական հատուցման չափը 164 800 դրամ է, օգտակար մնացորդը՝ 135 200 դրամ, օգտակար քաշը՝ 104 կգ, շուկայական արժեքը՝ 350 000 դրամ: Հարցվողների 70%-ը նշել էր, որ պատրաստ է հետագայում իրականացնել ապահովագրություն միայն ծրագրի անվճար լինելու դեպքում, 10%-ը՝ 2-3%-ի դեպքում, 10%-ը՝ 5%-ի դեպքում և մնացած 10%-ը՝ 0,5%-ի դեպքում:



Գծապատկեր 2 Ագրոապահովագրության արդյունավետության համակարգային գնահատման առաջարկվող մեխանիզմը:¹

Սակայն, ԽԵԿ-ի ապահովագրման շահառուների սպասումներն ու պահանջումներն էլ բավարման հետադարձ կապի տեղեկատվությունը այդպես էլ չհամակարգվեց և չդարձավ չափելի այնքանով, որքանով որ հնարավոր կլիներ այն ընդգրկելու ապահովագրական գործարքի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշում: Այս նպատակով, մեր կողմից առաջարկվում է ագրոապահովագրության արդյունավետությունը գնահատել համակարգային մոտեցմամբ, կատարելով հետևյալ քայլերը (տես գծապատկեր 2):

Առաջին. համակարգել ագրոապահովագրության բոլոր շահառուների սպասումները ապահովագրական գործընթացից (a0, b0, c0, d0, f0):

¹ Կազմվել է հեղինակի կողմից:

Երկրորդ. արձանագրել և համակարգել ապահովագրական գործընթացի փաստացի վերջարդյունքները՝ ըստ առանձին շահառուների (a_i, b_i, c_i, d_i, f_i)::

Երրորդ. բացահայտել շահառուների սպասումների և պահովագրության փաստացի վերջարդյունքների շեղումները ($\Delta a, \Delta b, \Delta c, \Delta d, f\Delta$):

Չորրորդ. հաշվարկել շեղումների հիմքով հաշվարկել ագրոապահովագրության արդյունավետության ինտեգրալային ցուցանիշ.

$$\Sigma (\Delta a, \Delta b, \Delta c, \Delta d, f\Delta) \min \longrightarrow$$

Артак Мартиросян, Проблемы системной оценки эффективности агрострахования - Эффективность агрострахования не следует рассматривать исключительно с точки зрения страховых компаний и фермерских хозяйств. В настоящее время важна степень удовлетворенности различных заинтересованных сторон (бенефициаров) процессом страхования, поэтому эффективность агрострахования должна на консолидированной основе отражать социально-экономические последствия процесса страхования как на микро, так и на макроэкономическом уровнях.

Artak Martirosyan, Problems of system assessment of agriculture insurance - The effectiveness of agricultural insurance should not be considered solely from the point of view of insurance companies and farms. At present, the degree of satisfaction of various stakeholders (beneficiaries) with the insurance process is important, therefore, the effectiveness of agricultural insurance should, on a consolidated basis, reflect the socio-economic consequences of the insurance process at both the micro and macroeconomic levels.